87-ՐԴ ՆԻՍՏ

4 հունիսի 1919թ.

Երևան, հունիսի 4 - Հայաստանի Խորհրդարանի հունիսի 4-ի նիստն սկսվում է ժամը 8 անց կեսին՝ խիստ լարված տրամադրությամբ: Ներկա է խորհրդարանի գրեթե ամբողջ կազմը: Հասարակություն շատ կա: Նիստն սկսվում է ձախակողմյանների աղմուկով և բացականչություններով ու արտակարգ դիմումներով: Նախագահին հազիվ է հաջողվում կարգ պահպանել:

Ղարաջյանը հուզված կարդում է սոց[ցիալ]-դեմ[ոկրատիական] ֆրակցիայի հայտագիրը, խիստ դարձվածքներով մեղադրում է դաշնակցությանը, որ 1918թ. ամառը, Հայաստանի ճգնաժամին, համաձայնեց պառլամենտում գործակցել սոց[իալ]-դեմ[ոկրատիական] հետ: Նոյեմբերից հենվելով երերվող ու վաճառվող ժողովրդական կուսակցության վրա, ձգտում է իր ներքին և արտաքին բացարձակ քաղաքականությունը վարել: Պառլամենտը դաշնակցության աչքում կորցնում է

իր նշանակությունը. հետևում է փետրվարի 28-ի միջադեպը, մինչև մայիսի 28-ը: Պառլամենտն անվանական գոյություն է ունենում: Մայիսի 28-ին կատարվում է անսպասելի հեղաշրջում կառավարության կողմից, որին ապրիլի 27-ին խորհրդարանը մի ամսով հանձնել էր իր լիազորությունները: 28-ին այդ լիազորությունների ժամանակամիջոցն անցել էր, կառավարությունն իրավունք չուներ Միացյալ Հայաստանի անկախության ակտն հայտարարելու: Երկրորդ ակտը՝ խորհրդարանի կազմի մեջ 12 թրքահայ պատգամավորներ ընտրելու վերաբերմամբ նույնպես ապօրինի է և կառավարության իրավասությունից դուրս: Հետևաբար կառավարությունը, հենված դաշնակցության վրա, բռնակալ է, օրենքներից չի ակնածում, գործում է սահմանադրական ոգու դեմ: Ուստի սոց.-դեմ. ֆրակցիան հրաժարվում է խորհրդարանի աշխատանքներին մասնակցելուց:

Հայտագրի ընթերցանության ժամանակ հեգնական բացականչություններ և սուր նկատողություններ կենտրոնից: Ընթերցումից հետո ֆրակց[իան] «բարի ճանապարհ» հեգնական բացականչությունների տակ թողնում է դահլիճը:

Տեր-Խաչատրյանը կարդում է ժողովրդական կուսակցության հայտագիրը. Մայիսի 28-ի ակտի հայտարարությունը, 12 թուրքահայ պատգամավորների մուտքը խորհրդարան, կուսակցությունը համարում է պետական հեղաշրջում, սահմանադրական խախտում և մեծ հարված սահմանադրությանը:

Կառավարության արած քայլը դուրս էր նույնիսկ խորհրդարանի իրավասություններից, Փարիզի հայ համաժողովի և Հայաստանի խորհրդարանի խառը նիստը միայն կարող էր հրատարակել Միացյալ Հայաստանի Անկախության ակտը: Այդ ապօրինության հետևանքով կուսակցությունը չի ճանաչում Հայաստանի Խորհուրդն ու կառավարությանն իբրև օրինավոր մարմիններ: Հետ է կանչում ժողովրդական նախարարներին, ակտիվ բոյկոտ է հայտարարում պառլամենտական ընտրություններին:

Նույն կարգով ֆրակցիան հեռանում է դահլիճից:

Խոսքը տրվում է Վարչապետին: Սոց. հեղ. *Թումանյանը* պահանջում է նախ հերթից դուրս լսել ֆրակցիայի արտակարգ հայտագիրը. նախագահը չի համաձայնվում: Էսէռները աղմկում են: *Վարչապետը* սկսում է զեկուցումը: *Թումանյանը* հայտագրի բարձրաձայն ընթերցումով խանգարում է նրան խոսել, նախագահը անհաջող փորձում է լռեցնել Թումանյանին: Բարձրանում է աղմուկ, ժխոր: Էսէռները թողնում են դահլիճը: *Վարչապետ Խատիսյանը* տալիս է փաստալի զեկուցում, որը տևում է երկու ժամ ու կես և լսվում է մեծ ուշադրությամբ խորհրդարանի և հասարակության կողմից:

Վարչապետի զեկուցումը

Զեկուցումը վերաբերում է մի ամսյա գործունեության: Կառավարությունը բացառիկ հանգամանքներում կատարել է խորհրդարանի հրահանգները և պատասխանատու է նրա առաջ իր գործունեության համար: Գործունեությունը բաժանվում է երկու մասի. օրենսդրական և վարչական: Ապրիլի 17-ի օրենքի համաձայն կառավարությունը հաստատել է 99 օրինագծեր: Դրանցից 71-ը անցյալ դեկտեմբերից մինչև ներկա փետրվարի ժամանակաշրջանում ներկայացվել են խորհրդարանին: Վերջինս միջոց չի ունեցել քննելու: Կառավարությունը քննել, հաստատել է չնչին փոփոխություններով: Մնացածը նոր օրինագծեր են, որոնք վերաբերում են զորքի կազմակերպման, գրաված շրջանների կառավարության ու հանրական կրթության խնդիրներին և միանգամայն անհետաձգելի էին: Նախարարության խորհրդում 96 օրենք անցել է միաձայն: Հաստատված օրենքների ցուցակը ներկայացված է խորհրդարանի նախագահության:

Կառավարությունը մայիսի 26-ին և 27-ին հրատարակել է երկու ակտ: Առաջինը՝ Միացյալ Հայաստանի անկախության ակտը: Խորհրդի նիստին ներկա են եղել 8 նախարարներից 7-ը, Վարչապետ Քաջազնունին Թիֆլիսումն էր: Հինգը կողմնակից էին ակտի հաստատման, 1-ը՝ ձեռնպահ, 1-ը՝ դեմ: Ձեռնպահ նախարարը սկզբունքով համաձայն էր, բայց դրա իրավասությունը համարում էր

խորհրդարանին և ոչ կառավարությանը: Անկախության ակտի հրատարակության դրդապատճառները հետևյալներն են. Հայաստանի Հանրապետության սահմանները հասել են նախկին Թուրքիայի սահմաններին: Կարսի նահանգի երեք քառորդն արդեն մեր ձեռքումն է: Ախալցխայի շրջանը մնում է վրացիների ձեռքում և Օլթին՝ տեղական մահմեդականների, որոնք ղեկավարում են թուրք սպաներ և զինվորներ: Օլթին մի քանի օրից կտիրենք: Արևմտահայ գաղթականությունը տարերային թափով շարժվում, կուտակվում է սահմանագլուխը. Ոչ մի հնար չկա ներգաղթը կանգնեցնելու: Կար և քաղաքական կողմ: Ներգաղթի մասին դաշնակիցների հետ բանակցելիս միշտ հարց էր ծագում՝ թե ինչ իրավունքով է Հայաստանի կառավարությունը միջնորդում արևմտահայերի համար, ինչ երաշխավորություն, որ նա վայելում է արևմտահայերի վստահությունը: Բացը զգացվում էր, թե՛ դաշնակիցների, թե՛ մեր կողմից: Բացատրություն էր տրվում, որ փաստորեն միացյալ ենք, բայց ձևական բացը ստացվում էր ամեն քայլափոխում: Դրդապատճառ էր և այն կասկածը, որ Հայաստանը չի ձգտում անկախության, դեռ տատանվում է:

Միացյալ Հայաստան ստեղծելու խնդրով Փարիզում մեր պատվիրակությունը բանակցում էր Ռուսաստանի ոչ մեծամասնական ներկայացուցչի հետ: Աջեմյանը, որ շատ մոտ է այդ ներկայացուցիչներին, հաղորդել է կառավարությանը, որ Միացյալ Հայաստանի անկախության հրատարակությունն անհրաժեշտ է: Փարիզի պատվիրակության նախագահ Ահարոնյանը նույն բանն է կրկնել:

Անհրաժեշտ էր կազմակերպել ուժեղ, համերաշխ զորք՝ ընդարձակվող հայրենիքի սահմանների պաշտպանության համար: Զորքի կազմակերպության փորձերն ապացուցում էին երկու երկրամասերի միացման անհրաժեշտությունը: Արևմտահայերը, կասկածելով որ արևելահայերը չեն ձգտում բաժանվել Ռուսաստանից, անկախ լինել, խուսափում էին զինվորագրվելուց: Անհրաժեշտ էր վերացնել անջրպետն՝ ուժեղ, միացյալ բանակ ունենալու համար: Դաշնակիցների կողմից թույլատրված էր ներգաղթը դեպի Բայազետ, Ալաշկերտ: Չէր կարելի երկիր մտնել իբրև հպատակ կամ հյուր, պետք է մտնենք իբրև տերեր: Անհրաժեշտ էր օրինական իրավասություն այդ երկրի տերը համարվելու համար:

Ներկա պայմանները հանգամանքների արդյունք էր. պետք է տեղի տար ընտրովի պառլամենտի: Որպեսզի նոր պառլամենտը լիներ համայն հայության կամքի արտահայտիչը, հարկավոր էր օրինական հնարավորություն տալ արևմտահայերին՝ ընտրություններին մասնակցելու:

Հարցը հասունացած էր և այժմեական, հարկավոր էր պատմական համապատասխան մոմենտ: Ամենահարմարը Հայաստանի անկախության տարեդարձն էր, որ մենք օգտագործեցինք, թեև գիտեինք, որ Ռուսաստանին կապված փոքր քաղաքական շրջանները պիտի բողոքեին: Կատարվածը քաղաքական անհրաժեշտություն էր: Կատարողները միայն դաշնակցականները չէին, այլև ժողովրդական նախարարները, որոնք ստորագրել են ակտը:

Կառավարությունը գործել էր շատ զգույշ՝ երկրի գերագույն շահերը ի նկատի ունենալով: Ակտի հրատարակության մեջ ոչ մի կուսակցական ձգտում չի եղել: Կառավարությունը չգիտեր թե ովքեր են լինելու նոր 12 պատգամավորները: Բացի այդ պարզ էր, որ պառլամենտի մեծացած կազմը գործնական նշանակություն չէր ունենալու, որովհետև պառլամենտը պիտի ունենար մի նիստ միայն՝ կառավարությանը նոր լիազորություններ տալու համար: Մայիսի 29-ի* ակտին բնականօրեն հետևեց 27-ի ակտը: Միացյալ Հայաստանը պիտի ունենար միացյալ խորհրդարան: Նախարարների խորհուրդը 6 ձայնով ընդդեմ 2-ի, որոշեց հրավիրել արևմտահայերից 12 պատգամավոր՝ ընտրված արևմտահայ հեղինակավոր օրինական մարմնից՝ Արևմտահայերի Գործադիր Մարմնից: Ընդդիմախոսող նախարարները ըստ էության համաձայն էին, բայց գտնում էին, որ հրավերը կառավարության իրավասությունից դուրս է: Մարմինն ընտրված է 200.000

---

* Այսպես է թերթում, պետք է լինի 26-ի:-Ծանոթ. կազմ.:

արևմտահայերի կողմից: Ամբողջ աշխարհում չկա ուրիշ արևմտահայ մարմին, որն այդքան մարդկանցից ընտրված լինի: Փարիզի համաժողովն** ավելի քիչ մարդկանց կողմից է ընտրված և իրեն իրավազոր չէ համարում արևմտահայ գործերում:

Հունիսի 21-ին ընտրված պառլամենտը կլինի իրավական և օրինավոր, իսկ նրան հետևող Միացյալ Հայաստանի Հիմնադիր ժողովը կլինի ավելի իրավազոր:

Երկու ակտերն էլ հրատարակվեցին մայիսի 28-ին, որովհետև տարեդարձի օրն էր, պատմական հարմար մոմենտ: Կառավարությունը գիտակցում է իր արածը և պատասխանատու է:

Ապա անցնելով նախարարությունների մի ամսվա առանձնակի գործունեության, վարչապետը տալիս է հետևյալ համառոտ տեղեկությունները:

Ներքին գործերի մինիստրություն - Նախիջևանի նահանգի կցումն առանց կռվի: Կցումը կատարվել է կանոնավոր զորքերի ձեռքով: Կամավորներ եղել են 300 սասունցիներ, Դավալուի և Արազդայանի արանքում, բայց իբրև կանոնավոր զորք: Նախօրեն անգլիական զորքը մտել և հող է պատրաստել մեր զորքի համար: Մինչև վերջ էլ այդ շրջանում անգլիացիներն ամեն աջակցություն ցույց են տվել մեզ: Շնորհիվ այդ աջակցության ու մեր զորքերի վայելուչ ընթացքի, գրավումն անցավ անարյուն, առանց միջադեպերի: Սուրմալվում հայ-թաթարական ընդհարումն չի եղել: Ընդհակառակը, զորքերն ու թաթարները միացած քշել են քուրդ ավազակներին: Երեք ամսվա ընթացքում Հայաստանի սահմաններում ազգայնական հողի վրա ընդհարումներ չեն եղել: Եղել են ընդհարումներ ավազակային խմբերի հետ միայն:

- Նախքան Նախիջևանը, կցված է Կարսը: Զորքն ու սպայությունը լավ գիտակցելով կատարված գործի վեհությունը, պահում են իրենց գերազանց լավ: Ոչ մի թալան և բռնություն տեղի չի ունեցել: Մինչև հունիսի 3-ը Ղարսում տեղավորվել են 300.000 գաղթական, կուտակվել են 12.000 արևմտահայ գաղթականներ:

- Տեղական ժողովուրդը՝ քուրդերն ու թաթարները, լավ են ընդունել գաղթականներին, մոլականներին և հույներին՝ ոչ: Պատճառը հետևյալն է, Ռուսաստանի քայքայումից մնացած ժառանգությունից մեծ բաժին է ընկել Կարսի մոլոկաններին: Նրանք վախենում են Կարսում այդ ստացվածքի իսկական տիրոջ՝ հայկական կառավարության հաստատվելուց: Հույների Ազգային խորհրդից ստացված է սրտառուչ հեռագիր, որով իրենք հավատարմություն ու անձնվիրություն են հայտնում կառավարությանը: Բացառություն է կազմում Օլթիի շրջանը, որտեղ գտնվում են 400 ծպտված ասկյարներ, որոնք 1.000 տեղացի մահմեդականների հետ, թրքական սպաների ղեկավարությամբ ըմբոստացել են մեր դեմ: Այնտեղ է գնում անգլիական պատգամավորություն, որին հետևելու է գեներալ Հովսեփյանը՝ ուժեղ զորամասով:

Ղարաբաղի հարցը, հակառակ կառավարության ջանքերին, մնում է անփոփոխ:

Արտաքին գործերի մինիստրություն - Անդրկովկասյան հանրապետությունների համաժողովը արդյունք չի տալիս. Ադրբեջանը և Վրաստանը հարուստ են ֆինանսապես, տրանզիտի հարմարություն ունեն: Հայաստանը հարուստ է հողով: Նրանք համաձայն են մեզ տնտեսական տրանզիտային զիջումներ անել, մեզանից սպասում են հողային զիջումներ: Կառավարությունն առանց այդ զիջումների դժվարանում է պարենավորման ու տնտեսական կետից, որոշել է ամեն բան անել, բացի հողային զիջումներից և հայրենիքը չվաճառել (բուռն ծափեր):

- Անգլիական հրամանատարության գրավոր հաղորդակցության համաձայն, Հայաստանի անգլիական զորքին փոխարինելու են իտալական զորքերը, բայց նրանք չեն գալիս: Իտալացիներն այժմ տնտեսական հարցեր են միայն ուսումնասիրում:

** Նկատի ունի Փարիզում 1919թ. փետրվարի 24-ից ապրիլի 8-ը տեղի ունեցած Հայ ազգային առաջին համագումարը:-Ծանոթ. կազմ.:

- Փարիզի պատվիրակությունից քիչ տեղեկություններ են ստացվում: Հայկական հարցի վճիռը պիտի հայտարարվի Թուրքիային առաջարկվելիք պայմանագրի մեջ: Թուրքիային պայմանագիր տրվելու է Գերմանիայի և Ավստրիայի պայմանագրերի ստորագրելուց հետո, հունիսի վերջերին կամ հուլիսի սկզբին: Քաջազնունին և էնֆիաջյանը մայիսի 29-ին մեկնել են Փարիզ, որտեղ նրանց ներկայությունն անհրաժեշտ է:

Դենիկինը հասել է Եալլամա և Ադրբեջանին առաջարկել է թույլ տալ կամավորական բանակին Ադրբեջանի հողով անցնել Անդրկասպյան երկիրը: Վրաստանին տրված է պահանջագիր, որի բովանդակությունն անհարմար է հայտարարել: Հայաստանը կապ չունի Դենիկինի հետ, նրանից դիմում չի ստացել: Կառավարությունը հայտարարել է բոլոր զինվորականներին և պաշտոնյաներին, որ կամավորական բանակի հետ որևէ կերպ կապված մարդիկ ազատ են այնտեղ գնալու: Մնացողները պարտավոր են ճանաչել միմիայն հայկական իշխանությունը (ծափեր):

- Հայկական գաղութներից ստացվում են սրտաշարժ դիմումներ:

Բոլորն երջանիկ են վերստեղծվող հայրենիքի անկախությամբ: Կառավարությունը հիմնում է նորանոր հյուպատոսարաններ՝ գաղութներին իր շուրջը համախմբելու (ծափեր):

Պարենավորման մինիստրություն - Պարենավորման տեսակետից մայիսն ամենասարսափելի ամիսն էր: Ներմուծվել է 24 վագոն ցորեն Մակուից, 6 վագոն ալյուր՝ Թիֆլիսից: Մայիսին մահացածությունը ավելացավ, զինվորները հացաբաժնից զրկվեցին, գաղթականությունը սաստիկ տառապում էր: Բաքվից բրինձ չէին թույլատրում: Հունիսից դրությունը լավացավ: Ամերիկան պարտավոր է մինչև սեպտեմբերի 1-ը Հայաստանին 1.200.000 փութ ալյուր տալ: Բաթում է հասցրել կես միլիոն և պահանջ է դրել Հայաստանի բոլոր վագոնները, շոգեշարժերն ուղարկել Բաթում ալյուրի փոխադրության համար՝ սպառնալով հակառակ դեպքում այլևս ալյուր չտալ: Անգլիան և Վրաստանը միացան Ամերիկայի պահանջին, իսկ կառավարությունն երկար տատանումներից հետո, չնայած զինվորական, գաղթականական մեծ պահանջին, վճռեց դադարեցնել ամեն տեղափոխություն, վագոններն ուղարկել ալյուրի: Սանահինից արտասահման են անցել 202 վագոն և տասը շոգեշարժ: Երեք օրվա ընթացքում Հայաստան է մտել 35 վագոն ալյուր, 50 վագոն Թիֆլիսումն է: Ադրբեջանից 4.000.000 ռ. նավթ է գնված. Վրաստանում գնված է 65 վագոն մազութ, անգլիացիներից՝ տաս: Անգլիացիները խոստանում են պահանջած քանակությամբ նավթ տալ, պայմանով՝ որ միայն ալյուրի փոխադրությունը գործադրվի:

Զինվորական նախարարություն - Զորքը կազմակերպվում և բազմանում է: Կա միայն կանոնավոր զորք՝ կամավորներից կազմված: Կամավորական սկզբունքը ամենանպատակահարմարն է, որ կիրառվում է այժմ Եվրոպայում: Արևմտահայերը մեծ քանակությամբ մտնում են զորքի մեջ: Այնուամենայնիվ, կրկին մեծ կարիք կա նոր զորքի, որովհետև եղածը հազիվ է բավականացնում Զուլֆայի և Օլթիի սահմանները պահպանելու համար:

Հանրային կրթության նախարարություն - Որոշված է նպաստ տալ արտասահմանի համալսարաններում սովորողներին: Սեպտեմբերից Հայաստանում հիմնել համալսարան (բուռն ծափեր):Սկզբնական ծախսերի համար հատկացված է 800.000 ռ.: 5.000.000 ռ. հատկացված է բոլոր դպրոցների շենքերի վերանորոգության համար: Որոշված է մինչև հունիսի 15-ը բոլոր դպրոցական բռնված շենքերը դատարկել (ծափեր):

Արդարադատության նախարարություն - Հիմնված է բանտային տեսչություն և դատաստանական պալատ, որտեղ անցյալ օրը տեղի է ունեցել առաջին նիստը հայերեն լեզվով (բուռն ծափեր):

Ֆինանսների նախարարություն - Ֆինանսները ողբալի դրության մեջ են: Բոները վերջնականապես կորցրել են իրենց արժեքը: Պարսկաստանը վճռել է բոնով ոչինչ չծախել: Բոների արժեքն օրեցօր ընկնում է, եվրոպական դրամների հետ համեմատած, սարսափելի չափերով: Արտաքին փոխառություն անհնարին է,

երաշխիքներ չկան: Միակ երաշխիքը՝ յուղ, բամբակ և կոնյակ, հազիվ ապահովեն Ամերիկայից գնած ցորենի 100000000 ռ. արժեքը վճարելու: Չնայած Վրաստանի դրամական սիստեմի դեմ ունեցած հակասության, հարկադրված ենք նրա հետ միասին շարունակել բոների տպագրությունը, մինչև որ սեփական դրամներ կունենանք: Կառավարությունը փորձում է 10000000 ներքին փոխառություն անել:

Խնամատ. մինիստրություն - Կազմակերպվում է արևմտահայերի ներգաղթը: Նախապատրաստություններ են տեսնվում: Նախիջևան է վերադարձել և հաստատվել տեղում 18000 փախստական: Դժվարին խնդիր է թաքար փախստականության վերադարձը. նրանք դեպի հայերի ներգաղթը բարյացակամ չեն վերաբերվում, որովհետև օգտվելով նրանց բացակայությունից՝ տիրել և ցանել են նրանց հողերը: Արևմտահայերի ներգաղթի համար բազմաթիվ դիմումներ են արված դաշնակիցներին, որպեսզի նրանց ուղեկցեն հայկական կամ դաշնակիցների զորքերը: Նրանք համաձայնվել են մայիսի 20-ից ներգաղթ սկսել, բայց միայն անգլիական սպաների գլխավորությամբ, առանց զորքի: Դաշնակիցների ազատ զորքերը չկան. հայկական զորք ուղարկել չի կարելի, նախկին Թուրքահայաստանը դեռևս պաշտոնապես Թուրքիայի մասն է համարվում: Վերջին հեռագիրն է ուղարկված անգլիական արևելքի զինվորական քաղաքական իշխանություններին, բայց ստացված է, որ արևմտահայ փախստականները տարերային ուժով շարժվել են դեպի սահման, [հարկավոր է] շարժման առաջն առնել, առանց զորքի՝ զինված թուրքերի, քրդերի մեջ չի կարելի: Ներգաղթը կազմակերպելու համար Երևան է ուղարկված անգլիական հարյուրապետ Ռեյն: Նա ուղարկված է Բայազետ՝ պայմաններն ուսումնասիրելու և նախապատրաստությունների համար: Էրզրումից զորավար Բիչից ստացվել է գրություն, որով հաղորդում է, թե ինքն Էրզրում է եկել թուրք զորքի զինաթափված լինելն ստուգելու և առաջարկում է կառավարության՝ իր ձեռքն առնել Սարիղամիշ-Էրզրում երկաթուղու կառավարությունը և պատկանելությունը: Կառավարությունն անմիջապես մասնագետներ է ուղարկել ճանապարհն ընդունելու:

Հայացում. - Պատժական հանգամանքների հետևանքով հայ պաշտոնեության մեջ կան բազմաթիվ հայերեն չիմացողներ, որոնց աջակցությունը հայրենիքի վերստեղծման գործում անհրաժեշտ է: Ունենք ռուս պաշտոնյաներ բոլորովին հայերեն չգիտեցող: Նախարարությունների մեջ հայացում աստիճանաբար առաջ է գնում: Զինվորական և արդարադատության նախարարություններն են զուտ ռուսերենով գործողները: Մի քանի նախարարություններ գործը տանում են զուտ հայերենով, Նախարարական խորհրդում նույնպես: Վերջինին կից, Գևորգ Խատիսյանի նախագահությամբ կազմված հանձնաժողովը մշակել է հայացման օրինագիծ, որ շուտով կքննվի և կհաստատվի: Կարգադրված է հայերեն մտցնել այն զորամասերում, որտեղ հնարավոր է, որոշ զորամասերում մտել է արդեն: Հայերեն հեռագրեր են ստացված (բուռն ծափեր): Արդարադատության նախարարության մեջ հունիսից սկսել է հայերենը (ծափեր):

Բնական հարստությունների օգտագործումն.- Չորս միլիոն է հատկացված ուսումնասիրելու համար ջրի օգտակարությունն իբրև ոռոգող ու շարժի ուժ. մասնագետներ են հրավիրված: Նախարարությունների ներկայացուցիչներից հանձնաժողով է կազմված. ուսումնասիրական աշխատանքներն սկսել են:

Ամփոփում. - Կառավարությունը մինչև հունիսի 4-ը գործել է համերաշխ: Կառավարական նիստերը եղել են նախարարական ամբողջ կազմով: Կառավարությունը շարունակելու է իր գործունեությունը մինչև նոր խորհրդարանի ընտրությունը կամ ներկա խորհրդարանից անվստահության քվե ստանալը: Նախարարների հեռանալը չի խանգարի կառավարության գործունեությանը, նրանց փոխարեն նորերը կհրավիրվեն (ծափեր): Կառավարությունն իրեն պատասխանատու է զգում խորհրդարանի առաջ:

Վարչապետն ամբիոնից իջնում է բուռն և երկարատև ծափերի տարափի տակ:

Օթյակում գտնված հանրային կրթության նախարար *Մելիք-Դարագյոզյանը* հայտարարում է, որ ինքը անկախության ակտը կազմող նիստում չի եղել: Նրան

փոխարինել է իր օգնականը: Ինքը կողմնակից է ակտի հրատարակության, դեմ է միայն տասներկու արևմտահայերի խորհրդարան մտնելուն:

Տաս րոպե ընդմիջումից հետո նիստի շարունակությունը հետաձգվում է հունիսի 5-ի երեկոյան:

Հունիսի 4-ի նիստի շարունակությունը սկսվում է հունիսի 5-ին, երեկոյան ժ. 8 և կեսին, նախագահությամբ Ա. Սահակյանի:

Խնամատարության նախարար *Ս. Թորոսյանը* զեկուցում է.- Միացյալ Հայաստանի անկախության հայտարարումից հետո ամենամեծ խնդիրը, որը դրված է հայ ժողովրդի առաջ, նրա տնտեսությունը վերականգնելու խնդիրն է: Առանց դրան հայ ժողովուրդը չի կարող ունենալ անկախ ու միացյալ Հայաստան: Արևմտահայությունը՝ Հայաստանի* բնակչության կորիզը, պետք է հավաքել ու հայրենիք տանել: Հայաստանում ոչինչ չկա, փախստականներին պետք է ուղարկել ապրուստի բոլոր միջոցներով:

Ներգաղթի ու վերաշինության կազմակերպումն ունի երկու կողմ, գործնական ու քաղաքական: Ինձ հանձնված գործնական ծրագրի մշակումը վերջացել է:

Տալիս եմ ծրագրի համառոտությունը: Հայ ժողովրդի տարածման շրջանները բաժանվում են երկուսի-առաջին՝ բուն Հայաստանը, Պարսկաստանն ու սահմանակից երկրները. երկրորդ՝ Ռուսաստանը և նրան կից երկրները: Մեր սահմաններով անցնող փախստականությունը կառավարության ու ժողովրդի հոգածության առարկա պիտի լինի: Միջագետքից եկողների համար պիտի մշակվի առանձին ծրագիր: Ես մշակել եմ ծրագիր առաջին հատվածի մասին:

Ըստ ծրագրի՝ կառավարությունը հիմնում է ներգաղթի ու վերաշինության վարչություն, որի ֆունկցիաներն են՝ տնտեսական միջոցների հայթայթումը, վերադարձի պրոպագանդա, սերմացուի մատակարարություն, գաղթականների գոյության ապահովություն մինչև հնձի սկսվելը, երկրագործական գործիքների ընձեռումն, անասունների գնումն ու ապաստարանների կառուցումն:

Արմեն Սասունի - Քննադատելով Թորոսյանի ծրագիրը, պահանջում է թուրքահայության անունից անմիջապես կազմակերպել ներգաղթը դեպի Ալաշկերտ, Բասեն և Խնուս և ձմեռը չհասած տեղավորել նրանց, հակառակ դեպքում կառավարությունը պատասխանատու է պատմության առաջ:

Հմայակ Մանուկյան - Արևմտահայ ներգաղթի խնդիրը նույնչափ մեծ է, որքան Միացյալ Հայաստանի խնդիրը: Հայաստանը չի կարող միացյալ և անկախ լինել առանց ներգաղթի: Ներգաղթը չի կարող լինել առանց միացյալ և անկախ Հայաստանի: Այս տեսակետից մոտենալով խնդրին, կառավարության ամենաանհետաձգելի խնդիրներից մեկը պիտի լինի ներգաղթի խնդիրը: Արևմտահայ ժողովրդի հինգ տարվա ողբերգական կյանքը նրա մեջ մեռցրել է ամեն մի քաղաքական իդեալ: Այս օրերին, երբ Միացյալ Հայաստանի խնդիրն է դրված, նա ապրում է կյանքում ամենաողբերգականն, ամենասոսկալին: Սակայն նա դեռ տոկում է: Այդ տոկունությունները չի կարող պատճառ դառնալ ներգաղթի հետաձգման: Ներգաղթի խնդիրն այժմեական է: Ներգաղթը պիտի կազմակերպել այնպես, որ ժողովուրդը վտանգի չենթարկվի: Պիտի հավատալ ժողովրդի առողջ բնազդին: Թուրքահայ ժողովուրդը ազդանշանը տվել է. նա տարերային թափով շարժվում է և ոչ մի ուժ չի կարող կանգնեցնել. նա պիտի գնա, պիտի պահանջե յուր հայրենիքը ոչ իբրև հող, այլ իբրև քաղաքականապես ազատագրված հայրենիք՝ հենված 28-ի ակտի վրա, պիտի կատարվեն նրա քաղաքական իրավունքներն ամենալայն չափով:

Մաքսապետյան - Առաջարկում է ունենալ որոշ ծրագիր և իմանալ ի՞նչ պետք է արվի գործնականապես ներգաղթը կազմակերպելու խնդրում: Նախարարի առաջարկած ծրագիրը համարում է անգործնական: Կովկասում կա 222.000 գաղթական, Բաղդատ-Բակուբե՝ 15.000, Մոսուլ՝ 12.000, Դեր-Զոր՝ 5.000, Հալեպ՝ 8.000, Եգիպտոս՝ 10000 հոգի: Ներգաղթի կազմակերպման խնդրում դաշնակից-

* Նկատի ունի Արևմտյան Հայաստանը:-Ծանոթ. կազմ.:

ներից նյութական ու բարոյական օգնությունն անհրաժեշտ է: Հայ ժողովրդինը նույնպես: Ժողովրդին երկիր պիտի անցկացնել ամենակարճ ճանապարհով, այնպես, որ մինչև նոր պառլամենտի սկսվելը, նրանք լինեն իրենց հողի վրա: Ներգաղթը կթեթևացնի նույնպես կովկասահայ ժողովրդի վիճակը: Կառավարությունը պարտավոր է վերադարձնել Բակուրեի փախստականներին, չի անում: Մաքսապետյանն արևմտահայերի անունից պահանջում է կառավարությունից անմիջապես կազմակերպել ներգաղթը դեպի սահմանամերձ շրջանները և կազմել ներգաղթի նախարարություն:

Նախարար Թորոսյան - Բացատրություններ է տալիս. ներգաղթի խնդիրը կարելի է բաժանել երկու մասի՝ ծրագրի գաղթականների այժմյան վիճակը շատ ծանր է: Կառավարությունն ամեն հնարավոր ջանք գործադրել է այդ վիճակը թեթևացնելու: Մասիկյան քահանան նշանակված է Հյուսիսային Կովկասի ներկայացուցիչ՝ ներգաղթ կազմակերպելու համար: Ներկայացուցիչներ կան Դարիալում, Փոթիում ու Բաթումում: Վրաստանի ներկայացուցչին վեց միլիոն է տրված՝ Վրաստանում գտնվող արևմտահայ գաղթականության համար: Ադրբեջան մարդ է ուղարկված այնտեղի հայ ժողովրդի գաղթականության վիճակն ուսումնասիրելու համար, Պարսկաստան՝ նույնպես, հաղորդակցություն չլինելու պատճառով նրանցից տեղեկություններ չեն ստացվում: Մինչև ապրիլի սկիզբը գաղթականության վրա ծախսված է քառասուն միլիոն: Դրամ կա, բայց հաց չկա: Ապրիլի մեկից հունիսի հինգը Հայաստանում ստացված պարենի քանակը հազիվ մի գյուղի բավարարեր: Կառավարությունն առանձնապես մտահոգված է գաղթականության խնդրով, քննում է այդ խնդիրը, աշխատում է ելք գտնել, բայց արգելքները խանգարում են դրական արդյունքի հասնել: Կառավարությունն անզոր է աղետի հանդեպ: Միմիայն Երևանում 45.000 մարդու նպաստ է տրվում: Քաղաքը 700.000 ռ. է հատկացրել աշխատանքներ կազմակերպելու համար:

Ծրագրային մանրամասնություններ կան, որոնց նկարագրությունը երկար ժամանակ է պահանջում: Ներգաղթի համար ամեն բան պատրաստված է, պակասում է դաշնակիցների թույլտվությունն ու դրամը: Կառավարությունը խիստ այժմեական է համարում ներգաղթը: Կառավարությունը խորհրդարանի արտահայտությունն է, ինչ որ խորհրդարանի պարտքն է, այն էլ մերն է: Ներգաղթը պիտի կազմակերպվի ընդհանուր ուժերով: Կառավարության ջանքերով շնորհիվ Կարսի ու Նախիջևանի ներգաղթն անցավ հաջող: Արդ դաշնակիցների հետ բանակցություններ են վարվում արևմտահայերի ներգաղթի մասին, որպեսզի նա հայրենիք վերադառնա իբրև ազատ քաղաքացի: Ծրագիրը կազմել ենք մենք, գործը պիտի կատարեն նրանք:

Վարչապետ Խատիսյանի լրացուցիչ զեկուցումը - Կառավարությունը ներգաղթը համարում է ամենակարևոր հարցը, բայց մինչև քաղաքական դրության պարզվելը ներգաղթ լինել չի կարող: Դեռևս Փարիզի համաժողովը վերջնական վճիռ չի կայացրել Հայաստանի վերաբերմամբ: Գուցե վճիռ կա, բայց չի հայտարարված: Հավանորեն պաշտոնական վճիռը կլինի հուլիսի սկզբին: Անգլիացիները չեն ցանկանում վճռի մասին հայտարարել նրա պաշտոնապես հայտարարելուց առաջ՝ թուրքերին հայերի դեմ չգրգռելու համար: Արևմտահայ ներգաղթը միայն տնտեսական բնույթ չունի, այլև քաղաքական:

Կարսի ներգաղթի նախապատրաստությունը տևեց երեք ամիս՝ հունվարից մինչև ապրիլ և կառավարությունից մեծ եռանդ խլեց: Թուրքահայաստանի ներգաղթը ավելի դժվար է, նա դեռ Թուրքիա է: Զինադադարի պայմանագրի հիման վրա, Թուրքիան իրավունք ունի 35.000 զորք պահել:

Այդ զորքի մեկ մասը դասավորված է Թուրքահայաստանում: Անգլիացիները զինաթափում են միմիայն այդ թվից ավելի եղող զորքը: Պողոս Նուբար փաշան ու Թախթաջյանը խորհուրդ են տալիս առայժմ արևմտահայ ներգաղթը կանգնեցնել, մինչև վեց վիլայեթները դաշնակիցների կողմից գրավելը:

Կառավարությունը շարունակ հրահանգներ է ուղարկում Ահարոնյանին՝ ներգաղթն շտապեցնելու համար: Փարիզում համապատասխան դիմումներ են եղել, արդյունքը հայտնի չէ: Անգլիական կովկասյան հրամանատարությունը նույնպես

կարգադրություն չի ստացել: Նշանակում է հարցը պաշտոնապես վճռված չէ: Սամսոն, Տրապիզոն ու Կիրասոնի ներգաղթը սկսվել է: Ներգաղթին հսկում են անգլիական ու ֆրանսիական սպաներ: Դա համարվում է Թուրքիա վերադարձող թուրքահայերի ներգաղթ: Ներգաղթի ծրագիրը մշակված է մանրամասնորեն, նախատեսված է յուրաքանչյուր հանգամանք: Կազմված է մեծ չափանիշի մանրամասն քարտեզ ներգաղթի ղեկավարների համար: Պատճենները հանձնված են անգլիական ներկայացուցիչներին: Ներգաղթի հրաման ստանալու պես կարելի է կիրառել: Պարեն բավականաչափ կա և շարունակ ստացվում է: Մայիսի 29-ից հունիսի 4-ը Սանահինից Հայաստան է մտել 107 վագոն ալյուր: Պակասում են սայլեր ու ձիեր:

10 րոպե ընդմիջումից հետո նիստը վերսկսվում է: Պատգամավոր *Վրացյանը*, քննադատելով նախարար Թորոսյանի ծրագիրը, գտնում է անիրագործելի, ներգաղթը համարում է այժմեական, առաջարկում է ավելի գործնականորեն մոտենալ խնդրին: Պատգամավոր Վրացյանի առաջարկած բանաձևը անցնում է միաձայն:*

Ապա քննվում է խորհրդարանի արձակուրդն երկարացնելու հարցը: Պատգամավոր *Հարությունյանը* անհրաժեշտ գտնելով խորհրդարանի անդամների մասնակցությունը նախընտրական պայքարում, առաջարկում է դադարեցնել աշխատանքները մինչև նոր պառլամենտի բացվելը, համաձայն ապրիլի 27-ի օրինագծի 1 և 2 հոդվածների: Նոր խորհրդարանը ծրագրածի համաձայն պիտի բացվի հուլիսի 18-ին, բայց հաղորդակցության աննպաստ պայմանների պատճառով պառլամենտի բացումը կհետաձգվի 2-3 շաբաթով:

(Հայաստանի հեռագրական գործակալություն)

«Հայաստանի աշխատավոր», 7, 8, 10, 11, 14, 15, 20, 21 հունիսի 1919թ.

---

* Բանաձևը տես «Հայաստանի աշխատավոր», 13 հունիսի 1919թ.: Ծանոթ. կազմ.: